ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԱՏՐԻԿ ՏԵՎԵՃՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԲԱԹՐԻՔ ՏԷՎԷՃԵԱՆ, ՈՐ Ի ՓԱՐԻԶ, ՖՐԱՆՍԻԱ

Ցարգարժան պրն Տէվէճեան,

Հոգու բերկրանքով տեղեկացանք, որ առաջիկայ նոյեմբեր 15-ին Փարիզի Առաջնորդարանի եւ ՀԲԸ Միութեան համատեղ նախաձեռնութեամբ ի պատիւ Ձեզ կազմակերպուում է մեծարման հանդիսութիւն:

Հայրապետիս համար ուրախալի է, որ Դուք՝ արժանաւոր զաւակդ մեր ժողովրդի, հաւատաւոր գործերով, ազնիւ ծառայութիւններով ու վաստակով բարի համբաւ ու ճանաչում էք վայելում Ֆրանսիայում: Տարիներ շարունակ զբաղեցնելով բարձր ու պատասխանատու պաշտօններ քաղաքապետից մինչեւ պետական երեսփոխան ու պետական նախարար՝ Դուք Ձեր սէրն ու նուիրումը եւ իրաւաբանի Ձեր գիտելիքներն ու կարողութիւնները ի սպաս էք դնում Ֆրանսիայի պետական-հասարակական կեանքի առաջընթացին եւ հայ կեանքի զօրացմանն ու պայծառացմանը:

Այսօր բարեպատեհ առիթ ունենք Մեր մասնաւոր գնահատանքը բերելու Ձեզ Ֆրանսիայում Ձեր բազմաբեղուն գործունէութեան համար, որն իրաւամբ արժանացրել է Ձեզ հայորդեաց անկեղծ սիրուն ու յարգանքին: Քաղաքական ասպարէզում վաստակեալ հեղինակութեամբ Դուք կարեւոր աւանդ էք բերել Ֆրանսիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը, հայրենապաշտ ու ծառայասէր ոգով Ձեր ջանքերն ու կարողութիւնները ի սպաս էք դրել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործունէութեանը՝ նախանձախնդրօրէն ծառայելով Միութեան կողմից կեանքի կոչուող եկեղեցանուէր ու ազգաշէն ծրագրերի իրականացմանը: Մեր Սուրբ Եկեղեցու, ՀԲԸ Միութեան Վարչութեան եւ Ֆրանսիայի մեր բարեպաշտ ժողովրդի բաղձանքն է արժանաւորս գնահատուած տեսնել Ձեզ եւ Ձեր վաստակը:

Ցարգարժան պրն Տէվէճեան, սիրով ընդառաջելով Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Փարիզի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նագգաշեանի ազնիւ խնդրանքին եւ բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները Ֆրանսիայի պետութեան եւ ազգային մեր կեանքում՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ–ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պապտուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը մեր սուրբ հարց բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ գործոց յաջողութիւններ՝ ի բարօրութիւն Ֆրանսիայի եւ ի շինութիւն ազգիս հայոց:

Թող Բարին Աստուած հանապազ Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի եւ բազում պարգեւներով առատապէս շնորհազարդի Ձեզ եւ Ձեր ընտանեաց սիրեցեալ անդամներին:

Ողջ լեր ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Հոկտեմբերի
Ցամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 201